ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«3» փետրվարի 2021թ.
No 70

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 28.07.2020 թվականի թիվ 4125030 ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ

ՀՀ վարչական դատարանի վարույթում է գտնվում թիվ ՎԴ/5554/05/20 վարչական գործն ըստ հայցի անհատ ձեռնարկատեր Միասնիկ Աբրահամյանի ընդդեմ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 28.07.2020 թվականի թիվ 4125030 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումով հայցվորը վիճարկման առարկա է դարձրել գնման չափի, վերջինիս իրականացման ժամի և կտրոնի տրամադրման վերաբերյալ ստուգման ակտում արտացոլված փաստական հանգամանքները՝ ներկայացնելով ապացույց իրավախախտման բացակայության վերաբերյալ: Որպես 06.06.2020 թվականին ժամը 10:08-ին հսկիչ դրամարկղային մեքենա 140 դրամի չափով գնման մուտքագրումը հավաստող ապացույց՝ ներկայացվել է հարկ վճարողի կողմից դուրս բերված Z հաշվետվության պատճեն:

Հաշվի առնելով, որ ստուգման ընթացքում առաջացել է Z հաշվետվության դուրսբերման անհնարինություն՝ չի ապացուցվում ակտով արձանագրված գնման չափի և գնման իրականացման ժամի վերաբերյալ փաստական հանգամանքները:

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը՝ եզրահանգում ենք՝ իրավախախտման փաստը բացակայում է, որը հանգեցնում է վարչական ակտի անվավերության:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, նույն հոդվածի 2-րդ մասով, 67-րդ հոդվածով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Անվավեր ճանաչել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 28.07.2020 թվականի թիվ 4125030 ակտը:

2. Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ պարբերության՝ սույն որոշումը հասցեատիրոջը իրազեկելու նպատակով, հրապարակել ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայքէջում:

2/3/2021

X

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am